



**ՆԱԲԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ**

**ԼՂՀ գլխավոր դատախազության հեղափոխության  
և նախաքննության օրինականության նկատմամբ  
հսկողության բաժնի ավագ դատախազ,  
արդարադատության երկրորդ դասի խորհրդակցական**

**ԾՆՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԵԽԱՅԻՆ ԵՎ ՉՎԱԿԻ ԿՈՂՄԻՑ  
ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿ ԾՆՈՂԻՆ ՊԱՀԵԼՈՒՑ ՉԱՐԱՏՏՈՐԵՆ  
ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՔՆՈՒԹԱԳԻՐԸ**



ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընտանիքը, մայրությունը, հայրությունը և մանկությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գտնվում են հասարակության ու պետության հովանավորության և պաշտպանության ներքո: Պետությունը երաշխավորում է երեխաների իրավունքների առաջնային պաշտպանությունը:<sup>1</sup> Այսինքն, պետությունը շահագրգռված է ստեղծել ամուր, համերաշխ ընտանիք, խրախուսում և պաշտպանում է մայրությունը, հատուկ վերաբերմունք դրսևորում դեպի երեխաները, դեպի մատաղ սերունդը, քանի որ այդ ամենը նպաստում է հասարակարգի և պետության կայունացմանը:

Ընտանիքի շահերի պաշտպանության անհրաժեշտ միջոցներից է երեխաների /անչափահասների/ իրավունքների կենսագործ-

ծումը: 2008թ. ընդունված «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն «Յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք: Երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները: Ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների կողմից երեխայի համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման անկարողության կամ անհնարիմության դեպքում պետությունը ցուցաբերում է համապատասխան օգնություն»<sup>2</sup>:

Ընտանիքի և երեխայի շահերի կենսագործման կարևորագույն երաշխիք է դրանց քրեաիրավական պաշտպանությունը: 2013թ. ընդունված ԼՂՀ քրեական օրենսգրքի 20-րդ՝ «Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ» գլխում ընդգրկված թվով 12 հանցակազմեր՝ 169-180-րդ հոդվածները միտված են ընտանիքի և երեխայի շահերի պաշտպանությանը<sup>3</sup>:

Անդրադառնալով ԼՂՀ քրեական օրենսգրքի 20-րդ գլխում ներառված հանցագործություններից ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու /հոդված 179/ և զավակի կողմից անաշխատունակ ծնողին պահելուց չարամտորեն խուսափելու /հոդված 180/ քրեաիրավական բնութագրին:



## ԼՂՀ դատական իշխանություն

ԼՂՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու համար, այսինքն ծնողի կողմից երեխային կամ տասնութ տարին լրացած անաշխատունակ զավակին դատարանի վճռով ապրուստի միջոցներ վճարելուց երեք ամսից ավելի չարամտորեն խուսափելու համար:

Արարքի հանրային բարձր վտանգավորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծնողների կողմից երեխաներին պահելուց խուսափելը վատթարացնում է նրանց կենսապայմանները, խախտում անչափահասների հոգեկան և ֆիզիկական նորմալ զարգացումը և անաշխատունակ չափահաս զավակի նորմալ գոյությունը:<sup>4</sup> ԼՂՀ ընտանեկան օրենսգրքը կարգավորում է երեխաներին պահելու ծնողների պարտականությունների հետ կապված հարցերը: ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 68-րդ հոդվածին համապատասխան ծնողները պարտավոր են պահել իրենց երեխաներին և ծնողները ինքնուրույն են որոշում երեխաներին ապրուստի միջոց տրամադրելու կարգն ու պայմանները: Նրանք կարող են ընտանեկան օրենսգրքի պահանջներին համապատասխան համաձայնություն կնքել իրենց երեխաներին պահելու մասին (ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն): Եթե ծնողները ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններին պահելու համար միջոցները (ալիմենտը) ծնողներից բռնագանձվում են դատական կարգով: Նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն ծնողները պարտավոր են ապրուստի միջոցներ տրամադրել իրենց օգնության կարիքն ունեցող անաշխատունակ չափահաս զավակներին: Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում անաշխատունակ չափահաս զավակների համար ալիմենտի չափը՝ կայուն դրամական գումարով, որոշում է դատարանը: Ի դեպ, ալիմենտ բռնագանձելու պահանջով ստացողը դատարան կարող է դիմել ցանկացած ժամանակ, ապրուստի միջոց

վճարելու պարտականություն ունեցող անձի կողմից նշված պարտականությունը կատարելուց խուսափելու հանգամանքով պայմանավորված:

Երեխայի օգտին ալիմենտ բռնագանձելու հայցը, որպես կանոն ներկայացվում է ծնողներից մեկի, հիմնականում՝ մոր կողմից, ով հանդես գալով որպես երեխայի օրինական ներկայացուցիչ, և ոչ ալիմենտային պարտավորության սուբյեկտ, իրականացնում է ոչ թե ալիմենտ բռնագանձելու իր ընտանեկան իրավունքը, այլ իրականացնում է երեխայի իր ծնողից ալիմենտ ստանալու սուբյեկտիվ իրավունքը:<sup>5</sup>

Պրակտիկայում լինում են դեպքեր, երբ ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող հայր ծնողը, խուսափելով իր երեխային ալիմենտ վճարելու պարտականությունը կատարելուց, խուսափելու հանգամանքը բացատրում է նրանով, որ իր կողմից վճարման ենթակա ալիմենտի գումարները մայր ծնողի կողմից կարող է ծախսվել ոչ երեխայի ապրուստը հոգալու համար, այլ իր համար: Նման դեպքում, սակայն նրանք անտեսում են մեկ կարևոր գործոն, որ նույնիսկ ալիմենտ չվճարելով խաթարում են երեխայի ներքնաշխարհը, նրանց ղնում ծանր կացության մեջ: Եվ, եթե իհարկե ունեն հայրական պարտքի զգացում, պետք է գիտակցեն, որ բաժանվելով երեխայի մորից, չի բաժանվում երեխայից և չի դադարում իր երեխայի հայրը լինելուց՝ անկախ ամուսնալուծության հիմք ծառայած հանգամանքներից:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի բնորոշումից նկատելի է, որ այս հոդվածով քրեական պատասխանատվության հարցը ծագում է այն դեպքում, երբ դատարանի վճռով ապրուստի միջոց վճարելու պարտականություն ունեցող անձը երեք ամսից ավելի չարամտորեն խուսափում է ապրուստի միջոց վճարելու պարտականությունը կատարելուց: Այսինքն, հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է ծնողի կողմից դատարանի վճռով ապրուստի միջոց վճարելուց երեք ամսից ավելի չարամտորեն խուսափելու



մեջ: Հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է հետևյալ հանգամանքների միաժամանակյա առկայություն, որ ծնողը չարամտորեն, այսինքն պարբերաբար, տևականորեն, առանց օբյեկտիվ հիմքերի հրաժարվի դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ապրուստի միջոցներ վճարելուց և ապրուստի միջոցներ վճարելու պարտականությունը կատարելուց չարամտորեն խուսափի երեք ամսից ավելի ժամկետով: Ընդ որում, չարամտորեն խուսափելու եղանակները կարող են դրսևորվել ամենատարբեր ձևերով՝ օրինակ՝ բնակության, աշխատանքի վայրի հաճախակի և առանց հարգելի պատճառների փոխելով, եկամտի այլ իրական աղբյուրները թաքցնելով և այլն:

Ապրուստի միջոց վճարելուց խուսափելու բովանդակությունն ու բնույթը յուրաքանչյուր կոնկրետ դեպքով պետք է մանրամասն ստուգվի և հետազոտվի, օրինակ՝ հնարավոր են դեպքեր, երբ ալիմենտ վճարելու պարտավոր անձը, հարգելի պատճառով տևական ժամանակ աշխատանք չունենա, ասենք՝ տեղի է ունեցել հաստիքի կրճատում և աշխատանք գտնելու փնտրտումները դրական արդյունք չեն տվել և այլն: Նման դեպքերում տևական ժամանակով երեխային պահելու համար ապրուստի միջոցի չվճարումը քրեորեն պատժելի չի կարող համարվել:<sup>6</sup>

Հանցագործության օբյեկտը անչափահաս երեխաների կամ տասնութ տարին լրացած անաշխատունակ զավակների նորմալ պայմաններում ապրելու և դաստիարակվելու հնարավորություն ընձեռող նյութական շահերն են, հետևաբար տուժող կարող են հանդիսանալ անչափահասները, ովքեր դատարանի վճռով իրենց ծնողներից ապրուստի միջոցներ ստանալու իրավունք ունեն կամ տասնութ տարին լրացած անաշխատունակ զավակները, որոնց ծնողները պարտավոր են դատարանի վճռով վճարել ապրուստի միջոց:

Սուբյեկտիվ կողմից հիշյալ հանցագործությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ հանցավորը պետք է ցանկանա չարամտորեն խուսափել երե-

խային պահելուց: Ծարժառիքները բազմազան են, արարքի որակման համար որևէ նշանակություն չունեն և կարող են հաշվի առնվել պատիժ նշանակելուց:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է, կարող է լինել ծնողը, այն անձինք, ովքեր երեխայի ծննդյան վկայականում գրանցված են որպես հայր և մայր, որդեգրողը, ներառյալ այն անձը, ում հայրությունը ճանաչված է ԼՂՀ ընտանեկան օրենսդրությամբ սահմանված կարգով: Սուբյեկտ կարող է հանդիսանալ նաև այն անձը, ով գրկվել է ծնողական իրավունքներից, քանի որ ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ծնողական իրավունքներից գրկելը ծնողներին չի ազատում իրենց երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից: Թեև պրակտիկայում հաճախ կարելի է հանդիպել դեպքերի, երբ անձը գրկված լինելով ծնողական իրավունքներից, նրա մոտ կարծիք է ձևավորվում, որ ազատվել է նաև երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից: Իսկ թե որ դեպքերում են ծնողները կամ նրանցից մեկը գրկվում ծնողական իրավունքներից, հստակ թվարկված է ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 59-րդ հոդվածում, ըստ որի ծնողները կամ նրանցից մեկը կարող են գրկվել ծնողական իրավունքներից, եթե նրանք՝

ա) չարամտորեն խուսափում են ծնողական պարտականությունները կատարելուց, ընդ որում՝ ալիմենտ վճարելուց,

բ) առանց հարգելի պատճառների հրաժարվում են վերցնել իրենց երեխային ծննդատնից կամ բժշկական այլ կազմակերպությունից, ինչպես նաև դաստիարակչական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ մմանատիպ այլ կազմակերպություններից,

գ) չարաշահում են իրենց ծնողական իրավունքները, ընդ որում՝ իրենց հակաբարոյական վարքագծով վնասակար ազդեցություն են գործում երեխաների վրա,

դ) դաժանաբար են վարվում երեխաների հետ, ընդ որում՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն են գործադրում նրանց նկատ-



## ԼՂՀ դատական իշխանություն

մամբ, ոտնձգում են նրանց սեռական անձեռնմխելիությունը,

ե) տառապում են քրոնիկ ալկոհոլամոլությունամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ,

զ) կատարել են իրենց երեխաների դեմ դիտավորյալ հանցագործություն:

Այսպիսի վարքագիծ դրսևորած ծնողների նկատմամբ դատական կարգով կիրառվող այնպիսի սանկցիա, ինչպիսին է ծնողական իրավունքներից զրկելը, ծնողների նկատմամբ կիրառվող ծայրահեղ միջոցառում է և կիրառվում է այն ժամանակ, երբ ներգործության մյուս միջոցները արդյունք չեն տվել:

Այն դեպքում, եթե ծնողները կամ նրանցից մեկը փոխել են իրենց վարքագիծը, կենսաձևը և (կամ) երեխայի դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը, ապա դատական կարգով՝ ծնողական իրավունքներից զրկված ծնողի դիմումի հիման վրա ծնողական իրավունքները կարող են վերականգնվել, ընդ որում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ: Տասը տարին լրացած երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների վերականգնումը կատարվում է՝ նրա կարծիքը հաշվի առնելով, և դատարանը, նրա կարծիքը հաշվի առնելով, իրավունք ունի մերժելու ծնողական իրավունքների վերականգնման հայցը, եթե ծնողական իրավունքների վերականգնումը հակասում է երեխայի շահերին: Իսկ եթե երեխան որդեգրված է, և որդեգրումը սահմանված կարգով չի վերացվել, ծնողական իրավունքների վերականգնում չի թույլատրվում: Ընտանեկան օրենսգրքի 63-րդ հոդվածով սահմանված կարգով դատարանը կարող է նաև վճռով սահմանափակել ծնողական իրավունքները: Ե՛վ ծնողական իրավունքներից զրկելը, և՛ ծնողական իրավունքների սահմանափակումը ծնողներին չի ազատում երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից:

Ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու հանցագործության համար նախատեսված է պատիժ՝ տուգանք՝

մվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

ԼՂՀ ընտանեկան օրենսգիրքը կարգավորում է նաև չափահաս զավակների կողմից ծնողների ապրուստը հոգալու պարտականությունների հետ կապված հարցերը: ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 75-րդ հոդվածին համապատասխան աշխատունակ չափահաս զավակները պարտավոր են պահել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողներին և հոգ տանել նրանց մասին: Որպես կանոն, չափահաս զավակները իրենց կարիքավոր անաշխատունակ ծնողներին պահում և նրանց ապրուստը հոգում են կամավոր, անկախ նրանից, թե ծնողների հետ ապրում են համատեղ, նույն հարկի տակ, թե առանձին: Ե՛վ եթե չափահաս աշխատունակ զավակները չեն կատարում այս պարտականությունը, չափահաս աշխատունակ զավակներից ծնողներին պահելու համար ալիմենտը բռնագանձվում է դատական կարգով: Նույն կարգով ալիմենտը բռնագանձվում է նաև օգնության կարիք ունեցող ծնողների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում:

Անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողները առանձին դեպքերում իրենց չափահաս զավակներից ապրուստի միջոց վճարելու պահանջով կարող է չդիմեն դատարան իրենց զավակներին խղճալու, նրանցից ամաչելու, ծնողական ինքնագոհության և այլ պատճառներով, սակայն այն դեպքում, երբ դիմեն դատարան, դատարանը, զավակներից յուրաքանչյուրից բռնագանձվող ալիմենտի չափը՝ կայուն դրամական գումարով որոշում է, ելնելով ծնողների և զավակների գույքային ու ընտանեկան դրությունից և ուշադրության արժանի շահերից: Դա ենթակա է վճարման յուրաքանչյուր ամիս: Չափահաս զավակներից յուրաքանչյուրի առնչությամբ ալիմենտի չափը որոշելիս դատարանը կարող է հաշվի առնել տվյալ ծնողի չափահաս աշխատունակ բոլոր զավակներին, անկախ նրանից, թե պահանջը ներկայացվել է նրանցից մեկի, մի քանիսի, թե բոլորի դեմ: Չավակները կարող են



ազատվել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողների ապրուստը հոգալու պարտականությունից, եթե դատարանի վճռով կհաստատվի, որ ծնողները ժամանակին խուսափել են իրենց ծնողական պարտականությունները կատարելուց: Իսկ ծնողական իրավունքներից զրկված ծնողներն էլ կորցնում են իրենց զավակներից ապրուստի միջոցներ պահանջելու իրավունքը: Այս իսկ եղանակով օրենսդիրը բարձրացրել է ծնողների պատասխանատվությունը իրենց երեխաների նկատմամբ:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում զավակի կողմից անաշխատունակ ծնողին պահելուց չարամտորեն խուսափելու, այսինքն անաշխատունակ կամ նյութական օգնության կարիք ունեցող ծնողին դատարանի վճռով ապրուստի միջոցներ վճարելուց երեք ամսից ավելի չարամտորեն խուսափելու համար:

Հանցագործության օբյեկտը անաշխատունակ կամ օգնության կարիք ունեցող ծնողների նյութական շահերն են, որոնք հնարավորություն են ընձեռում նրանց ապրելու նորմալ պայմաններում: Հանցագործությունից տուժող կարող են հանդիսանալ ինչպես անաշխատունակ/ օրինակ՝ կենսաթոշակային տարիքի հասած, 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամ/, այնպես էլ աշխատունակ, սակայն օգնության կարիք ունեցող ծնողները:

Ինչպես ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու, այնպես էլ զավակի կողմից անաշխատունակ ծնողին պահելուց չարամտորեն խուսափելու հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ զավակը չարամտորեն, այսինքն պարբերաբար, տևականորեն, առանց օբյեկտիվ հիմքերի խուսափի դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ապրուստի միջոց վճարելուց և ապրուստի միջոց վճարելու պարտականությունը կատարելուց չարամտորեն խուսափի երեք ամսից ավելի ժամկետով:

Հանցագործությունը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է միայն ուղակի դիտավորու-

թյամբ, այսինքն հանցավորը պետք է ցանկանա չարամտորեն խուսափել անաշխատունակ կամ նյութական օգնության կարիք ունեցող ծնողին պահելուց: Շարժառիթները կարող են տարբեր լինել, որոնք արարքի որակման համար որևէ նշանակություն չունեն և կարող են հաշվի առնվել պատիժ նշանակելուց:

Սուբյեկտը հատուկ է, կարող է լինել չափահաս, աշխատունակ զավակը /որդեգրվածը/, որը չարամտորեն խուսափում է իր անաշխատունակ կամ նյութական օգնության կարիք ունեցող ծնողին / որդեգրողին/ պահելուց:

Չավակի կողմից անաշխատունակ ծնողին պահելուց չարամտորեն խուսափելու հանցագործության համար որպես պատիժ է նախատեսված տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

ԼՂՀ ընտանեկան օրենսդրության համաձայն՝ ալիմենտային պարտավորություններ կարող են առաջանալ ոչ միայն ծնողների և զավակների միջև, այլ նաև ամուսինների և նախկին ամուսինների, պապի, տատի և թոռների, եղբայրների և քույրերի, փաստացի խնամողների ու սաների, խորթ ծնողների և խորթ զավակների միջև: Այն դեպքում, երբ ընտանիքի նշված անդամները ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնություն ձեռք չեն բերում, ապա կարող են ալիմենտ բռնագանձելու պահանջով դիմել դատարան: Ամուսինների և նախկին ամուսինների, պապի, տատի և թոռների, եղբայրների և քույրերի, փաստացի խնամողների ու սաների, խորթ ծնողների և խորթ զավակների միջև ալիմենտային պարտավորությունները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում քրեական պատասխանատվության վրա հասնելու հարց չի ծագում, քանի որ գործող ԼՂՀ քրեական օրենսգրքով այդ առթիվ քրեական պատասխանատվություն նախատեսված չէ, քրեական պատասխանատվություն նախատեսված է միայն ծնողների և զավակների միջև ալիմենտային պարտավորությունները



## ԼՂՀ դատական իշխանություն

կատարելուց չարամտորեն խուսափելու համար: ԼՂՀ-ում մինչև 2003թ. գործող 1961թ. քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն էր նախատեսված անաշխատունակ ամուսնուն պահելու համար օգնություն ցույց տալուց խուսափելու համար, ինչը, քրեորեն պատժելի մի շարք այլ արարքների հետ 2003թ. ( հետագայում 2013թ.), ընդունված ԼՂՀ քրեական օրենսգրքով ապաքրեականացվել է, և դրան հակառակ առանձին գլխում քրեական պատասխանատվություն է սահմանվել այնպիսի արարքների կատարման համար, որոնք նախկինում պատժելի չէին, քրեական պատասխանատվություն է սահմանվել ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված այնպիսի արարքների համար, ինչպիսիք են ծնողներից երեխային ապօրինի բաժանելը /172 հոդ./, երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը /176 հոդ./, երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը / 177 հոդ./ և այլն:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ պարտատիրոջ անձի հետ անխաղճիորեն կապված իրավունքների՝ ներառյալ ալիմենտի և կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջների, անցնելն այլ անձի չի թույլատրվում<sup>7</sup>: Այսինքն, ալիմենտային պարտավորությունների գուտ անձնական բնույթից ելնելով, չի կարող ո՛չ ալիմենտ վճարելու պարտականությունը դրվել այլ անձանց վրա և ո՛չ էլ ալիմենտ ստանալու իրավունքը փոխանցվել այլ անձանց: Ալիմենտային պարտավորություններում պարտքի փոխանցման և իրավունքի զիջման վերաբերյալ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 397-407 հոդվածների կանոնները կիրառելի չեն:

ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 108-րդ հոդվածում թվարկված են այն ընդհանուր հիմքերը, որոնց առկայության դեպքում ալիմենտային պարտավորությունները դադարում են: Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայ-

նությամբ սահմանված ալիմենտային պարտավորությունները դադարում են կողմերից մեկի մահվան դեպքում՝ այդ համաձայնության գործողության ժամկետի լրանալով կամ այդ համաձայնությամբ նախատեսված այլ հիմքերով:

Դատական կարգով բռնագանձվող ալիմենտի վճարումը դադարում է՝

ա) երեխայի չափահաս դառնալով կամ մինչև չափահասության հասնելը երեխաների լրիվ գործունակություն ձեռք բերելով.

բ) երեխային որդեգրելիս, որի ապրուստի համար բռնագանձվում էր ալիմենտը.

գ) ալիմենտ ստացողի աշխատունակությունը վերականգնվելիս կամ կարիքավորությունը դադարելիս.

դ) անաշխատունակ, օգնության կարիք ունեցող և ալիմենտ ստացող նախկին ամուսնու նոր ամուսնություն կնքելիս.

ե) ալիմենտ ստացող անձի կամ ալիմենտ վճարելու պարտավոր անձի մահվամբ:

Ի տարբերություն ԼՂՀ քրեական օրենսգրքի, Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքով ծնողի կողմից երեխային և զավակի կողմից անաշխատունակ ծնողին պահելուց չարամտորեն խուսափելու հանցակազմը նախատեսված է 157-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում, և «Քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի և կարգի կատարելագործման հարցերով Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքում և քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» 2016թ. հուլիսի 3-ի թիվ 323-Փ 3 օրենքով<sup>8</sup> քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է նոր խմբագրությամբ, ըստ որի քրեական պատասխանատվությունը վրա է հասնում այն դեպքում, երբ ծնողի կողմից անչափահաս երեխաներին կամ տասնութ տարին լրացած անաշխատունակ զավակին դատարանի վճռով կամ նոտարական կարգով հաստատված համաձայնությամբ ապրուստի միջոցներ չվճարելը կատարվել է առանց հարգելի պատճառի, պարբերաբար, այսինքն հա-



մանման արարքի կատարման համար վարչական տույժի ենթարկված անձի կողմից, այն ամբողջ ժամանակաշրջանում, երբ անձը համարվել է վարչական տույժի ենթարկված:

Նույն հոդվածի 2-րդ մասը նույնպես փոփոխվել է և շարադրվել նոր խմբագրությամբ, ըստ որի՝ չափահաս աշխատունակ զավակի կողմից անաշխատունակ ծնողին չափահելու համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում այն դեպքում, երբ չափահաս աշխատունակ զավակի կողմից դատարանի վճռով կամ նոտարական կարգով հաստատված համաձայնությամբ ապրուստի միջոցներ չվճարելը կատարվել է առանց հարգելի պատճառի, պարբերաբար, այսինքն համանման արարքի կատարման համար վարչական տույժի ենթարկված անձի կողմից, այն ամբողջ ժամանակաշրջանում, երբ անձը համարվել է վարչական տույժի ենթարկված:

«Քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի և կարգի կատարելագործման հարցերով Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքում և քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՌԴ օրենքի ընդունմամբ պայմանավորված Ռուսաստանի Դաշնության առանձին օրենսդրական ակտերում փոփոխություն կատարելու մասին» 2016թ. հուլիսի 3-ի թիվ 326-Փ 3 օրենքով<sup>9</sup> Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում 5-րդ հոդվածը լրացվել է 5.35.1 հոդվածով, որի 1-ին մասով վարչական պատասխանատվություն է սահմանվել ծնողի կողմից անչափահաս երեխաներին կամ տասնութ տարին լրացած անաշխատունակ զավակին դատարանի վճռով կամ նոտարական կարգով հաստատված համաձայնությամբ ապրուստի միջոցներ չվճարելու համար, որը կատարվել է կատարողական վարույթ հարուցվելու օրվանից երկու և ավելի ամսում, եթե այդպիսի արարքը չի պարունակում քրեորեն պատժելի արարք:

Նույն հոդվածի 2-րդ մասով վարչական պատասխանատվություն է սահմանվել չափահաս աշխատունակ զավակի կողմից դա-

տարանի վճռով կամ նոտարական կարգով հաստատված համաձայնությամբ ապրուստի միջոցներ չվճարելու համար, որը կատարվել է կատարողական վարույթ հարուցվելու օրվանից երկու և ավելի ամսում, եթե այդպիսի արարքը չի պարունակում քրեորեն պատժելի արարք:

Մեր կարծիքով, ԼՂՀ օրենսդրության մեջ նման փոփոխություն կատարելը արդարացված կլինի, քանի որ նման մոտեցումը ավելի է կարևորում և բարձրացնում ապրուստի միջոց ստանալու կարիք ունեցող անձանց իրավունքների օրենսդրական պաշտպանությունը:

1. *Տե՛ս ԼՂՀՊՏ 2012.04.21/07(197):*
2. *Տե՛ս ԼՂՀՊՏ 2008.06.12/21(93):*
3. *Տե՛ս ԼՂՀՊՏ 2013.06.21/12(231):*
4. *Տե՛ս Գ.Ս.Ղազիկյան, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Երևան, 2006, էջ 328:*
5. *Տե՛ս Գ.Հ.Ղարախանյան, Հայաստանի Հանրապետության ընդունելի իրավունք, Երևան, 2008, էջ 356:*
6. *Տե՛ս <http://www.ukrf.net/s157.html>*
7. *Տե՛ս ԼՂՀՊՏ 2016.04.22/04(295)*
8. *Տե՛ս <https://rg.ru/2016/07/08/uk323-dok.html>*
9. *Տե՛ս [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_200705/3d0cac60971a511280cbba229d9b6329c07731f/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_200705/3d0cac60971a511280cbba229d9b6329c07731f/)*